

## Ինչպե՞ս է «Medi-Cal»-ը համագործակցում «Medicare»-ի հետ

«Medi-Cal»-ը ցածր եկամուտ ունեցող հատուկ անձանց համար գործող առողջուրթյան ապահովագրման ծրագիրն է Կալիֆոռնիայում:

### Կարո՞ղ եմ ես և՛ «Medicare», և՛ «Medi-Cal» ունենալ:

Այո, շատերը երկու ծրագրից էլ օգտվելու իրավունք ունեն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՞ս «Medicare»-ի և «Medi-Cal»-ի մասին մեր տեղեկատվական թերթիկները:

### Ինչպե՞ս են «Medicare»-ը և «Medi-Cal»-ը համագործակցում:

Ձեր բուժսպասարկման համար առաջինը վճարում է «Medicare»-ը:

«Medicare»-ը վճարում է՝

- Ձեր բժշկի, հիվանդանոցի և բժշկական այլ ծախսերի համար:
- Ձեր դեղատոմսային դեղերի համար: Եթե Դուք «Medi-Cal» ունեք, ապա Դուք պետք է անդամագրվեք «Medicare»-ի D Բաժնի դեղերի որևէ ծրագրի:

«Medi-Cal»-ը վճարում է՝

- «Medicare»-ի Ձեր համավճարումները և չապահովագրված մասի ծախսերը.

---

### Ձեզ օգնություն է հարկավոր:

Ձանգահարեք Առողջապահական իրավունքների կենտրոն՝  
(800) 824-0780 հեռախոսահամարով:

Չայերենի համար խնդրում ենք սեղմել 9:

---

Առողջապահական իրավունքների կենտրոնը (CHCR) Կալիֆոռնիայում գործող՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որն անվճար տեղեկատվություն և իրավաբանական օգնություն է տրամադրում «Medicare»-ի հարցում: CHCR-ը ֆինանսավորվում է պետական և մասնավոր հիմնադրամների դրամաշնորհներով: Այս տեղեկատվական թերթիկը ֆինանսավորվել է «The Ralph M. Parsons» հիմնադրամի կողմից:

Չեղինակային իրավունքը © գրանցված է 2009 թ. օգոստոսին՝ Առողջապահական իրավունքների կենտրոնի կողմից:

- «Medicare»-ի D Բաժնով չվճարվող դեղերի, օրինակ՝ հանգստացնող, քնաբեր և առանց դեղատոմսի վաճառվող որոշ դեղերի համար.
- ծերանոցում տրամադրվող երկարատև խնամքի համար.
- Ձեր «Medicare»-ի B Բաժնի ապահովագիրը, եթե Դուք անբողջական «Medi-Cal» կամ «Medi-Cal»-ի՝ \$500-ից պակաս ծախսերի բաժին ունեք:

### **Ես որևէ բանի համար վճարում եմ:**

- Եթե Դուք «Medi-Cal»-ի անբողջական նպաստ եք ստանում, ապա Դուք «Medicare»-ի ծախսերի բաժին չեք վճարում: Բժշկական ծախսերը պետք է վճարվեն «Medicare»-ի և «Medi-Cal»-ի կողմից:
- Եթե Դուք ծախսերի բաժնով «Medi-Cal» ունեք, ապա Դուք պետք է վճարեք Ձեր ծախսերի բաժինը՝ նախքան «Medi-Cal»-ը կվճարի Ձեր բժշկական ծախսերը:
- Միշտ հարցրեք Ձեր բժշկից կամ սպասարկողից, թե արդյոք նա ընդունում է «Medicare» և «Medi-Cal»:

### **Ես «Medicare Advantage HMO»-ի անդամ եմ: Ի՞նչ կերպ է HMO-ն գործում իմ «Medicare»-ի և «Medi-Cal»-ի նպաստների հետ:**

- Դուք պետք է Ձեր անբողջ բուժսպասարկումը ստանաք «Medicare»-ի Ձեր HMO-ին պատկանող բժիշկների և բուժսպասարկողների կողմից: Ձեր HMO-ից դուրս Դուք կարող եք բուժօգնություն ստանալ միայն շտապ օգնության անհրաժեշտության դեպքում: Այդ ծառայությունների համար հաշիվը ներկայացվում է HMO-ին:

### **Դեռ հարցե՞ր ունեք:**

**Ջանգահարեք Առողջապահական իրավունքների կենտրոն՝  
(800) 824-0780 հեռախոսահամարով:  
Հայերենի համար խնդրում ենք սեղմել 9:**